ԱԶԳԱՑԻՆ ՏԵՍԱՒԹԻՒՆ

Վեհափառ Կաթողիկոսն իւր ժամանակին հեռագրով յայտնեց, ինչպէս ծանուցինք ընթերցողներին, Թագաւոր Կայսերն իւր ցաւակցութիւնը Կայսերուհու մահի մասին,

Վեհափառ Տէրը ներքին գործերի Նախարարի ընկերի միջոցով ընդունեց իւր հեռագրի պատասխանը, որի թարգմանութիւնը կը ներկայացնենք ահա։

Ձերդ Վեհափառութիւն,

Ողորմած Հովուապետ,

Թագաւոր Կայսր բարձրագոյն Բարեհաճեց հրամայել շնորհակալութիւն յայտնել Ձեր Վեհափառութեան և Ձեզ ստորագրված հօտին սոյն ամի մայիսի 25-ից Ձեր հեռագրով արտայայտված խորին տրտմութեան զգացմունքի համար Ն. Մ. Թագուհի Կայսերուհու մահի պատճառով։

Այս բարձրագոյն կամքի մասին պատիւ ունիմ հաղորդել Ձեր Վեհափառութեանը ըստ պատկանելոյն յայտնելու համար։

Խոնարհաբար կխնդրեմ Ձեր Վեհափառութիւն ընդունել իմ կատարեալ յարգանքիս և ճշմարիտ մտերմութեան հաւաստիքը։

Ձերդ Վեհափառութեան

խոնարհագոյն ծառայ

Լ. Մարտինով։

№ 2442,

Յունիսի 2, 1880 թ.

***

Վեհափառ Հայրապետը, Հայաստանի սուրբ եկեղեցուս կանոնների համաձայն, պատուիրեց գեր. Անդրէաս Արքեպիսկոպոսին (որ և ինքն իսկ ընդունած է ժամանակին) Ծայրագոյն Վարդապետութեան գաւազանը տալ յունիսի 5-ին Խորէն Վ. Ստեփանէին, Վահան Վ. Բաստամեանին և Կարապետ Վ. Այվազեանին։

***

Վեհափառ Կաթողիկոսը ցանկացաւ անշուշտ, որ սեպտեմբեր ամսին կանոնի համաձայն Ճեմարանական բաժնի ա. լսարանը բացվի։ Ուստի պատուիրեց կարևոր տնօրէնութիւն անել։ Սորա մասին եղած կարգադրութիւնները հրատարակվելու են սեպտեմբերի ամսատետրում։

***

Մեծ. Պ. Մկրտիչ Սանասարեան նուիրեց Ճեմարանի մատենադարանին Վենետիկում տպված հայերէն գրքեր 63 կտոր, որի համար կմատուցանվին հայրենասէր նուիրողին խորին շնորհակալութիւններ։

***

Վեհափառ Կաթողիկոսը, չկամենալով առանց մխիթարութեան թողնել Թիֆլիս քաղաքի իւր սիրելի ժողովուրդը և մինչև ցընտրութիւն արժանաւորագունին Առաջնորդութեան պաշտօնի անունը առժամանակեայ վերապահելով յինքն, հրամայեց Թիֆլիսի Կոնսիստորին շարունակել իւր գոր-

ծերը ընդ նախագահութեամբ շնորհաւնակ Մամբրէ Վարդապետ Սանասարեանի և անմխիթար չթողնելու համար ժողովուրդը հոգևորապէս, բարեհաճեց իւր կողմից նշանակել գեր. Գրիգոր Եպիսկոպոս Աղափիրեանին, որ քարոզէ և մխիթարէ ժողովուրդը պէտք եղած օրերին, պատարագէ հինգ տաղաւարի տօներին կամ ննջեցեալների տէրերի խնդրած միջոցին գնալ եկեղեցի և կամ սուրբ պատարագ մատուցանել, և Կայսերական հանդէսների օրերը իբրև Եպիսկոպոս նախագահելով եկեղեցական թափորին կատարել մաղթանքներ (մոլէբէններ)։ Վեհափառ Տէրը գեր. Գրիգոր Եպիսկոպոսն բոլորին ազատ կացուցել է վիճակի և Թիֆլիսի Թեմական ատենի պաշտօնական գործերից և հոգաբարձական ժողովից։

***

Յուլիսի 13ին կիւրակէ գիշերը ազգիս Վեհափառ Հայրապետը բարեհաճեց Թիւրականի ամարանոց գնալ օդափոխութեան և անձնական տկարութիւն կազդուրելու համար։

***

Վեհափառ Կաթողիկոսը պատուիրեց Խորէն Վ. Սաեփանէին արտասահման գնալու ինչ ինչ յանձնարարութեամբ, միամեայ ժամանակով ցվերջ օգոստոսի 1881 թ., որ և ուղևորվեցաւ յուլիսի 14ին։ Վեհափառ Տէրը բարեհաճեց անօրինել, որ «Արարատի» խմբագրութիւնը մնայ Խորէն Վարդապետի վերայ, նորան առանձին օգնական կարգվելով։